ՄԻՋԱՆԿՅԱԼ ԶԵԿՈՒՅՑԻ ՆԱԽԱԳԻԾ No. 2

Ապրիլի 3-24, 2012թ.

Ապրիլի 27, 2012թ.

I. ԱՄՓՈՓԱԳԻՐ

- Ապրիլի 8-ին պաշտոնապես մեկնարկած նախընտրական քարոզարշավն ակտիվ է: Ընդհանուր առմամբ, մասնակիցներն հնարավորություն ունեն իրականացնել նախընտրական քարոզարշավ, և նրանց տրամադրվել են միջոցառումներ անցկացնելու և քարոզչական պաստառներ փակցնելու համար անվճար տարածքներ: Այնուամենայնիվ, եղել են քարոզչական գործունեությանը խոչընդոտելու դեպքեր, այդ թվում ծեծկռտուքի երկու դեպք Երևանում:
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ Ընտրությունների դիտորդական առաքելությունը (ԸԴԱ) գրանցել է դեպքեր, երբ Ընտրական օրենսգրքի նախընտրական քարոզչությանը վերաբերող դրույթները խախտվել են: Այդ խախտումները ներառում են՝ քարոզչություն դպրոցներում, ուսուցիչներին և ուսանողներին խնդրել են մասնակցել Հայաստանի հանրապետական կուսակցության քարոզարշավի միջոցառումներին, և որոշ կուսակցությունների քարոզչական նյութեր փակցվել են տեղական ինքնակառավարման մարմինների շենքերին և ընտրատեղամասերում: Բարգավաճ Հայաստան կուսակցության առաջնորդին պատկանող ընկերության կողմից որոշ շրջաններում տրակտորներ են բաժանվել, փաստացի, որպես նախընտրական քարոզչության մի մաս: Ապրիլի 17-ի դրությամբ Ոստիկանությունը ուսումնասիրել էր կամ ուսումնասիրում էր հնարավոր ընտրական իրավախախտումների 14 դեպք:
- Ընտրությունների նախապատրաստական աշխատանքներն ընթանում են օրենքով սահմանված վերջնաժամկետներին համապատասխան: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) և Ընտրատարածքային ընտրական հանձնաժողովները (ԸԸՀ) շարունակում են աշխատել բաց և թափանցիկ ձևով: Տեղամասային ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ) ձևավորվել են և վերապատրաստվում են: ԿԸՀ-ն, ընտրության օրվանից բավական առաջ, ընդունել և հրապարակել է ընթացակարգային հիմնական կանոնները և պաշտոնական փաստաթղթերը:
- ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկվող լրատվամիջոցները քաղաքականության և ընտրությունների վերաբերյալ լայնածավալ լուսաբանում են իրականացնում: Նախքան նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը՝ Նախագահը և կառավարության պաշտոնյաները զգալիորեն լուսաբանվել են դիտարկված լրատվամիջոցների կողմից: Ապրիլի 8-ից հետո այդ երևույթը զգալիորեն նվազել է,

լրատվամիջոցները կենտրոնացել են խոշոր/հիմնական կուսակցությունների ու գրանցված մեկ դաշինքը լուսաբանելու վրա: Հանրային հեռարձակողն իրականացնում է համամասնական ընտրակարգով ընտրություններին գրանցված կուսակցություններին և դաշինքներին անվճար և վճարովի եթերաժամանակ տրամադրելու իր պարտականությունները:

- Ապրիլի 20-ի դրությամբ ԿԸՀ-ն ստացել է ավելի քան 80 բողոք, որոնց ճնշող մեծամասնությունը ներկայացվել է միևնույն անձի կողմից: Թեպետ դրանց քննությունը մերժվել է, այն հիմքով որ անհատ քաղաքացիներն իրավունք չունեն իրենց անձնական ընտրական իրավունքներին չառնչվող բողոքներ ներկայացնել, այնուամենայնիվ, ԿԸՀ-ն ուսումնասիրել է այս բողոքներից որոշների հիմքերը և չի հայտնաբերել Ընտրական օրենսգրքի խախտումներ: Թեկնածուների գրանցման հետ կապված չորս գործեր ներկայացվել են Վարչական դատարան, բոլորը կապված են եղել թեկնածուի գրանցման համար անհրաժեշտ հինգ տարի մշտական բնակության պահանջի հետ: Բոլոր գործերը մերժվել են ձևական պատճառներով՝ առանց բուն խնդրի ուսումնասիրության, թե արդյոք մշտական բնակության պահանջը իրավականորեն բավարարված է եղել:

II. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎ ԵՎ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

Նախընտրական քարոզարշավի պաշտոնական շրջանը սկսվել է ապրիլի 8-ից: Դանդաղ մեկնարկից հետո, քարոզարշավը թափ է հավաքել և ակտիվ է: Այն հիմնականում իրականացվում է լրատվամիջոցների, քաղաքական արտաքին գովազդի տեղադրման, «դռնեդուռ» քարոզչության և ուղղակի (ad hoc) հանդիպումների եղականով: Միայն որոշ կուսակցություններ են օգտագործել ցուցատախտակներ կամ կազմակերպել ավելի մեծ հանրահավաքներ, որոնցից ամենաակնառուն եղել են Հայաստանի հանրապետական կուսակցությունը (ՀՀԿ) և Բարգավաճ Հայաստանը (ԲՀԿ): Թեպետ, Ընտրական օրենսգրքի 18.6 հոդվածն արգելում է քարոզչությունը և քարոզչական նյութերի տարածումը մանկավարժական կազմի աշխատողների կողմից և ուսումնական հաստատություններում, այնուամենայնիվ ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները արձանագրել են մի շարք դեպքեր, երբ ուսուցիչները և ուսանողները ներգրավվել են ՀՀԿ-ի քարոզարշավում: Ապրիլի 11-ին Էջմիածնում ուսուցիչները և աշակերտները ազատ են արձակվել դասերից ՀՀԿ-ի հանրահավաքին մասնակցելու համար: Ապրիլի 14-ին Արաբկիր համայնքում (Երևանում) ուսուցիչները խնդրել են աշակերտներին դասերից հետո գնալ Նախագահ Սարգսյանի մասնակցությամբ ՀՀԿ-ի հանրահավաքին: Երկարաժամկետ դիտորդները նկատել են, որ ՀՀԿ մեծամասնական թեկնածուները (Արմավիրի մարզի թիվ 19 և 20 ընտրատարածքներ) քարոզչություն են իրականացրել դպրոցներում, ուսուցիչների և աշակերտների ներկայությամբ:

ՀՀԿ-ի կողմից վարչական ռեսուրսի օգտագործման որոշ դեպքեր են արձանագրվել, ներառյալ, Կապանում (Սյունիքի մարզ) շտապ օգնության մեքենայի օգտագործումը քարոզչական միջոցառման մասին հայտարարելու համար: Երկարաժամկետ դիտորդները նաև արձանագրել են, որ տեղական հարկային ծառայության աշխատակիցները քննարկել են այն, որ նրանք աշխատանքից շուտ են ազատ

արձակվել՝ ապրիլի 20-ին Թալինում (Արագածոտնի մարզ) ՀՀԿ-ի հանրահավաքին մասնակցելու պայմանով:

Քարոզչական պաստառների և նյութերի օգտագործումը սահմանափակող նոր կարգավորումները հիմնականում պահպանվում են: Եղել են մի քանի բացառություններ, երբ, ՀՀԿ-ն, ԲՀԿ-ն և Հայ հեղափոխական դաշնակցությունը (ՀՅԴ) իրենց պաստառները փակցրել են տեղական ինքնակառավարման մարմիրների շենքերի վրա կամ ընտրական տեղամասերում: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն արձանագրել է նաև ՀՀԿ-ի կուսակցական դրոշակները մի շարք դպրոցներում (Վանաձորի և Արմավիրի մարզեր): ԸԴԱ-ն, Հայաստանի ազգային կոնգրեսի (ՀԱԿ) կողմից հանրահավաքների ժամանակ վիրավորական լեզվի օգտագործման որոշ դեպքեր են արձանագրել:[1]

Ընտրական գործընթացների ամբողջականությունը կարևոր է քարոզչության տեսանկունից, առ այն, որ բոլոր կուսակցությունները և հիմնական լրատվամիջոցները մտահոգություն են հայտնում ընտրողների ցուցակների որակի, ձայների գնման և քաղաքացիների գրանցման ընթացակարգերի:[2] Որոշ զրուցակիցներ ևս մտահոգություն են հայտնել մեծ թվով նոր անձնագրերի (ընտրողի անձը հաստատող հիմնական փաստաթուղթը) տրամադրման վերաբերյալ:[3] Միևնույն ժամանակ, ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները և դաշինքը արտահայտել են իրենց պատրաստակամությունը անցկացնելու թափանցիկ և ժողովրդավարական ընտրություններ անցկացնելու վերաբերյալ, և դրա ապահովման համար որոշ նախաձեռնություններ են մեկնարկել:[4]

---

[1] Ներառյալ, ՀԱԿ թկնածուի կողմից Նախագահ Սարգսյանին որպես «Ֆաշիստական ռեժիմի ֆյուրեր»դիմելը (արձանագրվել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ների կողմից ապրիլի 20-ին Երևանում) և ՀԱԿ առաջնորդ Լևոն Տեր-Պետրոսյանի հանտարարությունները՝ կոչելով իշխանություններին «քրեական ռեժիմ», որն «ավելի վատն է, քան Կոմունիստականը», քանի որ «այն օգտագործում է բանակը՝ սեփական քաղաքացիներին ոչնչացնելու համար» (արձանագրվել է երկարաժամկետ դիտորդների կողմից ապրիլի 18-ին Արմավիրի և Էջմիածնի երկու հանրահավաքների ժամանակ):

2 Բոլոր քաղաքական կուսակցությունները, բացառությամբ ՀՀԿ-ից և Միավորված հայեր Կուսակցությունից (ՄՀԿ), ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին մտահոգություն են հայտնել ընտրողների ցուցակի որակի վերաբերյալ: Ձայների գնումը և քաղաքացիների գրանցման ընթացակարգերը՝ օրաթերթերում (Ժողովուրդ, Հրապարակ, Ժառանգություն, Հայկական Ժամանակ, Առավոտ) որոշ հեռուստաընկերությունների (Շանթ հեռուստաընկերություն, Երկիր Մեդիա) և օրինակ՝ A1+, news.am և lragir.am ինտերնետային կայքերում հաճախակի քննարկվող թեման են եղել:

[3] Նշված զրուցակիցները ներառում են ներկայացուցիչներ ՀԱԿ-ից և ԲՀԿ-ից: Տես նաև՝ Բաժին III Ընտրական գործընթացների կազմակերպում:

[4] Այդպիսի նախաձեռնություններից է Ազգային Ժողովի դիտորդական խումբը, որը ղեկավարում է խորհրդարանի նախագահը, և «ընտրությունների հանրային վերահսկողության» միջկուսակցական շտաբը, որը ստեղծվել է ՀԱԿ, ԲՀԿ և ՀՅԴ կողմից, ապրիլի 11-ին: Ժառանգությունը, որը սկզբում աջակցում էր այս նախաձեռնությանը, հետագայում դուրս եկավ: ՀՀԿ-ն մեկնարկել է նախաձեռնություն՝ համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունների կողմից վարքագծի կանոնների ստորագրում, որը կսահմանի մրցակցության արդարացի կանոններ և կապահովի Ընտրական օրենսգրքի պահպանումը:

Ապրիլի 17-ի դրությամբ, Ոստիկանությունը ուսումնասիրել է կամ ուսումնասիրում է ընտրական իրավախախտումների կասկածանքով 14 դեպքեր: Յոթ գործերի հետաքննություն կարճվել է՝ ապացույցների բացակայության պատճառով, մինչդեռ, մյուս յոթ գործերով հետաքննությունը շարունակվել է դեռ սույն զեկույցը պատրաստելիս:

Թեպետ, բոլոր մասնակիցները, հիմնականում, հնարավորություն են ունեցել քարոզարշավ իրականացնելու և նրանց տրամադրվել են միջոցառումներ անցկացնելու և պաստառներ փակցնելու անվճար տարածքներ, սակայն, եղել են ընդդիմության քարոզչական գործողություններին խոչընդոտելու որոշ դեպքեր, այդ թվում, թռուցիկների տարածման ժամանակ, գրանցվել են հանրահավաքներին մասնակցող անձանց սպառնալու դեպքեր,[5] և երկու ծեծկռտուք: Վերջինս տեղի է ունեցել ՀԱԿ և ՀՀԿ հետևորդների միջև, ապրիլի 15-ին և 16-ին Երևանի թիվ 7 ընտրատարածքում, երբ բաժանված քարոզչական նյութերը, ըստ ՀՀԿ թեկնածուի հետևորդների, պարունակել են վիրավորանքներ: Թեպետ, Ոստիկանությունը հետաքննում է ՀԱԿ ակտիվիստներից մեկի վրա կատարված հարձակումը, այն նրանց կողմից դիտվում է որպես սովորական հանցանք, և ոչ թե ընտրությունների հետ կապված միջադեպ:[6] ՀՀԿ թեկնածուն, իր հերթին, թիվ 7 Ընտրատարածքային ընտրական հանձնաժողով (ԸԸՀ) և Ոստիկանություն բողոք է ներկայացրել ՀԱԿ քարոզչական նյութի բովանդակության վերաբերյալ:

Ընտրական օրենսգրքի 18.7 հոդվածը արգելում է կուսակցություններին և թեկնածուներին, ինչպես նաև այն բարեգործական կազմակերպություններին, որոնց անունները կարող են փոխկապակցվել վերջիններիս հետ, նախընտրական քարոզչության ժամանակ ընտրողներին տրամադրել կամ խոստանալ ապրանքներ և ծառայություններ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները արձանագրել են, որ քարոզարշավի մեկնարկից հետո, Արագածոտնի, Արարատի, Արմավիրի, Կոտայքի, Լոռու և Շիրակի մարզերում նոր տրակտորներ են հայտնվել փակցված ԲՀԿ քարոզչական նյութերով կամ դրանց կողքին: ԲՀԿ նախընտրական բրոշյուրի համաձայն, կուսակցությունը կարևորություն է տալիս բոլոր մարզերում տրակտորների կայանների ստեղծմանը:[7] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ-ն ԲՀԿ առաջնորդին պատկանող Մուլտիգրուպ ընկերության գլխավոր տնօրենի կողմից տեղեկացվել է, որ

[5] Ապրիլի 15-ին Արմավիր մարզի մի գյուղում մի խումբ բնակիչներ, առանձին-առանձին տեղեկացրել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները, որ իշխանություններ, գյուղապետը և ՀՀԿ-ն իրենց սպառնացել են զրկել աշխատանքից, եթե նրանք ամասնակցեն նույն օրը կազմակերպվող Ժառանգության հանրահավաքին:

[6] Համաձայն Քրեական օրենսգքր 117-րդ հոդվածի, որի դրույթի համաձայն քննվում է միջադեպը, դիտավորությամբ թեթև մարմնական վնասվածք հասցնելու համար առավելագույն պատիժը երկու ամիս կալանքն է, մինչդեռ բռնություն գործադրելով ընտրական քարոզարշավին խոչընդոտելու համար՝ առավելագույնը հինգ տարի ազատազրկումն է (հոդված 149):

[7] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները Կոտայքում և Արմավիրում տեղեկացվել են, որ ԲՀԿ-ն Տրակտորները տրամադրում է համայնքներին անվճար: Գավառում, ԸԴԱ-ն տեղի ԲՀԿ ներկայացուցչի Կողմից տեղեկացվել է, որ դրանք ԲՀԿ-ի ծրագրի մի մասն են:

տրակտորների բաժանումը բիզնես-ծրագրի մաս է: ԲՀԿ շտաբերը հայտարարություն են ներկայացրել, որ ոչ մի տրակտորներ չեն նվիրվել և որ կուսակցությունը չի իրականացնում ոչ մի բարեգործական ծրագիր:[8]

Թեկնածուների գրանցման ավարտից հետո, համամասնական ընտրակարգով ցուցակից յոթ և մեծամասնական ընտրակարգով ցուցակից ութ թեկնածու ինքնաբացարկ են հայտնել:[9] Մինչ նրանցից շատերը նշում են անձնական պատճառներ և այլ պարտականություններ, թիվ 21 ընտրատարածքում առաջադրված թեկնածուն ենթարկվել է ֆիզիկական հարձակման նախքան ինքնաբացարկ հայտնելը:[10] Ինքաբացարկ հայտնած մեկ այլ թեկնածու ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին հայտնել է, որ իր առաջադրման միակ պատճառը եղել է մեկ այլ մեծամասնական ընտրակարգով թեկնածուի գրանցումը, քանի որ ընտրության անցկացման համար սզկբում անհրաժեշտ է առնվազն երկու թեկնածուի գրանցում:[11] Ինքնաբացարկներից հետո, թիվ 28 և 35-րդ ընտրատարածքներում ընտրաթերթիկում մնացել է միայն մեկ թեկնածու:[12]

Թեկնածուները, կուսակցությունները և մեկ գրանցված դաշինքը ժամանակին և ճիշտ եղանակով ներկայացրել են իրենց քարոզարշավի ֆինանսավորման առաջին հաշվետվությունները, որոնք պետք է ներկայացվեին մինչև ապրիլի 17-ը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը (ԿԸՀ) այս գործընթացում խախտումներ չի գրանցել: Այնուամենայնիվ, մեծամասնական ընտրակարգով 31 թեկնածուներ իրենց քարոզարշավը ֆինանսավորելու նպատակով հատուկ հաշվեհամարներ չեն բացել: ԿԸՀ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը Ընտրական օրենսգրքի 25-րդ հոդվածը մեկնաբանում է որպես նման հաշվեհամարի բացումը թեկնածուների համար չպարտադրող, եթե նրանք մտադիր չեն ֆինանսավորել որևէ միջոցառում, որը ըստ Օրենսգրքի կորակվի որպես քարոզչական ծախս: Օրենքը նաև չի նախատեսում հաշվեհամարի բացման համար վերջնաժամկետ:

III. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ընտրությունների վարչարարական կազմակեպումն ընթանում է օրենքով սահմնված վերջնաժամկետներին համապատասխան: Մինչև Ապրիլի 11-ը 1,982 Տեղամասային

[8] http://www.a1plus.am/en/politics/2012/04/21/bhk.

[9] Համամասնական ընտրակարգով ցուցակից ինքնաբացարկ հայտնած թեկնածուներն էին՝ Օրինաց երկիր կուսակցությունից (ՕԵԿ) (երեք կին), ՀՀԿ (մեկ կին) և Ժառանգություն (երկու տղամարդ):
Մեծամասնական ընտրակարգով ցուցակից ինքնաբացարկ հայտնած բոլոր ութ թեկնածուները ինքնաառաջադրվել էին (յոթ տղամարդ և մեկ կին)

[10] Հանաձայն իշխանությունների տված տեղեկատվության, այս գործի քննությունը շարունակվում է:

[11] Ընտրաթերթիկում մնացած թեկնածուն հաստատել է այս փաստը ԵԱԿՀ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները:

[12] Մեծամասնական ընտրակարգով ընտրությունը անցկացվում է, եթե անգամ միայն մեկ թեկնածու է առաջադրված: Ընտրաթերթիկը ներառում է երկու տարբերակ՝ թեկնածուին կողմ կամ դեմ, և թեկնածուն պետք է ստանա ընտրողների ձայների 50 տոկոսից ավելին:

ընտրական հանձնաժողովները (ՏԸՀ) ձևավորվել են:[13] ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները զեկուցել են, որ անկախ անդամության որոշակի փոփոխություններից, ՏԸՀ-ները գումարել են իրենց առաջին նիստերը:[14] ՏԸՀ-ների ընտրությանը նախորդող և ընտրության օրվան վերաբերող վերապատրաստումները շարունակվում են. երկարաժամկետ դիտորդները դրական են գնահատել իրենց այցելած վերապատրաստումները:

ԿԸՀ-ն և ԸԸՀ-ները շարունակում են աշխատել բաց և թափանցիկ եղանակով, իրենց նիստերի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրելով և մուտք ապահովելով կուսակցությունների, դաշինքի և թեկնածուների վստահված անձանց, դիտորդների և լրատվամիջոցների համար: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ երկարաժամկետ դիտորդները զեկուցել են, որ ԸԸՀ-ները և ՏԸՀ-ները հիմնականում տեխնիկապես լավ հագեցված են, թեպետ, որոշ դեպքերում նրանց շենքային պայմանները մտահոգության տեղիք են տվել:[15] Շրջանային մակարդակով խորհրդարանական կուսակցությունների ներկայացուցիչները ընդհանուր առմամբ վստահություն են արտահայտել ընտրական գործընթացների կազմակերպման վերաբերյալ, քանի որ նրանք կարող էին ՏԸՀ անդամներ առաջադրել և նշանակել վստահված անձանց ընտրական գործընթացների կազմակերպման յուրաքանչյուր մակարդակում, մինչդեռ ՀԱԿ դաշինքը, որը որպես խորհրդարանից դուրս ուժ, ներկայացված չի ՏԸՀ-ներում, արտահայտել է իր անվստահությունը: Ինչևէ, շահերի հնարավոր բախումը կարող էր նվազեցնել վստահության մակարդակը որոշ ԸԸՀ-ներում:[16]

ԿԸՀ-ն իր աշխատանքներում շարունակում է պահպանել օրենքով սահմանված վերջնաժամկետները: Զեկուցվող ժամանակաշրջանում ԿԸՀ-ն բաշխել է լրատավամիջոցներում անվճար և վճարովի եթերաժամանակը, որոշել է վճարովի քարոզչական ցուցատախտակների վայրերը[17] և իր կայքում հրապարակել է

[13] ԸԸՀ-ները նշանակում են ՏԸՀ-ի 2 անդամների, իսկ ՀՅԴ-ն, Ժառանգությունը, ԲՀԿ-ն, ՕԵԿ-ը և ՀՀԿ-ն նշանակում են մեկական ՏԸՀ անդամ:

[14] Թիվ 17 ընտրատարածքում, ԸԸՀ-ն (17/04 և 17/05 ՏԸՀ-ներում), ՕԵԿ-ը (17/07 ՏԸՀ-ում) և ՀՀԿ-ն (17/11 ՏԸՀ -ում) սկզբում նշանակել են տեղական համայնքի խորհրդի անդամների, ինչը արգելված է Ընտրական օրենսգրքով (հոդված 39.2). նրանք հետագայում փոխարինվել են: ՀՀԿ-ն ստիպված էր փոխարինել իր առաջադրած որոշ ՏԸՀ անդամների (4/17, 4/22, 4/23 ՏԸՀ-ներ), քանի որ նրանք առաջադրվել էին նաև թիվ 4 ընտրատարածքի կողմից:

[15] Թեկնածուները և ԸԸՀ ներկայացուցիչները գտնում են, որ թիվ 14 և 20 ԸԸՀ-ների փոքր տարածքները խնդիրներ կառաջացնեն քվեարկության արդյունքների հաշվարկի և աղյուսակավորման ժամանակ: Թիվ 17 ԸԸՀ-ն տեղեկացրել է երկարաժամկետ դիտորդները մարզպետարանում տեղակայված երկու ընտրական տեղամասերի վերաբերյալ, ինչը հակասում է Ընտրական օրենսգրքին (հոդված 15.3):

[16] Երկարաժամկետ դիտորդները տեղեկացվել են, որ թիվ 20 և 21 ԸԸՀ-ների երեքական անդամ աշխատում են Արմավիրի մարզպետարանում, մինչդեռ մարզպետը, որպես թեկնածու, ընգրկված է ՀՀԿ համամասնական ընտրացուցակում: Թիվ 41 ԸԸՀ-ն ղեկավարում է այդ ընտրատարածքի մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուներից մեկի կինը: Ընտրական օրենսգիրքը չի անդրադառնում այն դեպքերին, երբ շահերի բախումը կարող է հիմք հանդիսանալ ընտրական հանձաժողովի անդամին չնշանակելու կամ փոխարինելու համար:

[17] Ցուցատախտակների վճարովի վայրերի համար դիմել են միայն խորհրդարանական հինգ կուսակցություններ: Թեպետ օրենքով սահմանվծ է, ԿԸՀ-ն չի տեղեկացրել մեծամասնական

պաստառներ փակցնելու համար անվճար վայրերը և համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցությունների և դաշինքի համար նախատեսված հանդիպումների համար անվճար տրամադրվող փակ տարածքներ: ԿԸՀ-ն, ընտրության օրվանից բավական առաջ, ընդունել և իր կայքում հրապարակել է հիմնական ընթացակարգային կանոնները և պաշտոնական փաստաթղթերը: Այնուամենայնիվ, ԿԸՀ-ն չի ընդունել կարգավորում, որով կորոշվեր թեկնածություն առաջադրելու իրավունք ունենալու համար անհրաժեշտ հինգ տարվա մշտական բնակության պահանջը և չի սահմանել այն հաստատելու համար հստակ և օբյեկտիվ ընթացակարգեր: Գործնականում, Ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության (ԱՎՎ) կողմից նման վկայագրեր տալիս ցուցաբերվել է ոչ միատեսակ մոտեցում: Ավելին, ԿԸՀ-ի և դատարանի կողմից ուսումնասիրված գործերը ցույց են տվել, որ որոշ թեկնածուների համար հստակ չէր գրանցման համար մշտական բնակության պահանջը:

Չի պարզաբանվել նաև այն հարցը, թե արդյոք թեկնածուները կարող են անվճար երթևեկություն տրամադրել ընտրողներին ընտրության օրը: ԿԸՀ-ն և ԱՎՎ-ն նախաձեռնել են ընտրողների կրթական ծրագրեր հեռուստատեսությամբ և նաև թողարկել են ընտրական ընտրացակարգերին և ընտրողների ցուցակների ստուգմանը վերաբերող պաստառներ և թռուցիկներ: ԿԸՀ-ն շարունակում է տեղական դիտորդների հավատարմագրումը:[18] Այնուամենայնիվ, Ընտրական օրենսգրքի 29.1.3 հոդվածի նեղ և բառացի մեկնաբանության արդյունքում հավատարմագրման համար դիմած ինը կազմակերպություններ մերժվել են:[19] Անկախ այն հանգամանքից, որ մերժված կազմակերպություններից մեկը (Մարտունու Կանանց համայնքային խորհուրդ) որպես իր նպատակ է սահմանել «կանանց իրավունքների պաշտպանությունը և աջակցությունը», ԿԸՀ-ն սկզբում մերժել է գրանցումը այն հիմքով, որ կազմակերպության կանոնադրությունը չի ներառում «ժողովրդավարության և մարդու իրավունքներին» առնչվող նպատակներ: Երբ այս և այլ կազմակերպություններ փոփոխել են իրենց կանոնադրությունները՝ հատուկ ներառելով ժողովրդավարություն և մարդու իրավունքներ, նրանք գրանցվել են:[20]

Օրենքի համաձայն, մարզում կազմավորված ընտրատարածքներից յուրաքանչյուրում ընտրողների թիվը չպետք է ավելի քան 10 տոկոսով գերազանցի մարզի ընտրողների միջին թիվը: Ընտրատարածքները սահմանող ԿԸՀ որոշումը խստորեն համապատասխանում է այս պահանջին:[21] Նոր դրույթը սահմանում է (Ընտրական

ընտրակարգով թեկնածուներին, որ նրանք ևս կարող են դիմել նման տարածքի տրամադրման համար (Ընտրական օրենսգրքի հոդված 20.6):

[18] Ապրիլի 24-ի դրությամբ հավատարմագրվել են 44 տեղական կազմակերպություններ մոտ 23.000 դիտորդներով:

[19] Ընտրական Օրենսգրքի 29.1.3 հոդվածը պահանջում է որպեսզի տեղական և միջազգային հասարակական կազմակերպություններն, իրենց կանոնադրության համաձայն, զբաղվեն «ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հետ կապված խնդիրներով»:

[20] «Ազատություն և Ժողովրդավարություն» և «Մարտունու Կանանց համայնքի խորհուրդ» ՀԿ-ներ:

[21] 2012թ. N6-Ն ԿԸՀ որոշումը « Մեծամասնական ընտրատարածքների սահմանները որոշելու մասին»:

օրենսգրքի հոդված 17.2), որ ընտրատարածքի սահմանները չպետք է հատեն մարզային սահմանները: Արդյունքում, երկու մարզերում ընտրողների թվաքանակը զգալիորեն տարբերվում է ընտրողների միջին թվաքանակից:[22]

Ընտրողների ցուցակի որակը կատարելագործելու համար Ոստիկանությունը շարունակում է վերանայել տվյալները, այդ թվում, տեղական իշխանությունների, քաղաքական կուսակցությունների և տեղական դիտորդների հետ համագործակցությամբ անմիջապես տներում ստուգումներ է անցկացնում: Մահացածների և գրանցումից հանված մարդկանց ցուցակից հանելու արդյունքում գրանցված ընտրողների թիվը, մարտի 27-ից ապրիլի 16-ը ընկած ժամանակահատվածում, նվազել է 3.251-ով:[23] ԱՎՎ-ն բացատրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ 2011-2012թթ. ընթացքում նոր անձնագրերի տրման թվի աճը պայմանավորված է նախկինում երկարաձգված ժամկետով անձնագրերի փոխարինումով:[24]

IV. ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկվող[25] լրատվամիջոցները քաղաքականությանը և ընտրություններին առնչվող լայնածավալ լուսաբանում են իրականացնում լրատվական հաղորդումների, հատուկ ընտրական ծրագրերի և վճարովի եթերաժամանակի միջոցով:[26] Այն ներառում է թեկնածուների և քաղաքական կուսակցությունների կամ դաշինքների ներկայացուցիչների հետ հարցազրույցներ, սակայն շատ քիչ թվով բանավեճեր:[27]

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հանձնարարել է հեռարձակողներին իրենց հեռուստահաղորդումների վերաբերյալ դիտարկումների զեկույցներ ներկայացնել: Թեպետ ոչ մի լրատվամիջոց այդ մասին որևէ առարկություն չի հայտնել ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, սակայն օրենքը չի պահանջում լրատվամիջոցներին դիտարկման տվյալներ ներկայացնել ՀՌԱՀ-ին:[28] ՀՌԱՀ-ն նախազգուշացում է ուղարկել երկու հեռուստաընկերությունների, որոնք չեն ներկայացրել դիտարկման պահանջվող

[22] ԿԸՀ որոշման համաձայն, յուրաքանչյուր ընտրատարածքում գրանցված ընտրողների միջին թվաքանակը կազմել է 60.333 ամբողջ երկրում: Հունվարի 12-ի դրությամբ թիվ 39 ընտրատարածքում գրանցված ընտրողների թիվը կազմել է 46,317, միչդեռ թիվ 19, 20 և 21 ընտրատարածքներում՝ գերազանցել է 72.000-ը:

[23] Ապրիլի 16-ի դրությամբ ընդհանուր գրանցվել են 2,482,593 ընտրողներ:

[24] ԱԱՎ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ 2009-ին տրվել է մոտ 200,000, 2010-ին մոտ 270.000 2011-ին մոտ 398,000 և 2012թ հունվարի 1-ից մինչև ապրիլի 10-ը՝ մոտ 100,000 անձնագիր:

[25] Սույն զեկույցում ներառված դիտարկման ժամանակահատվածը ներառում է մարտի 27-ից ապրիլի 20ը:

[26] Ապրիլի 8-ից սկսված վեց խոշոր կուսակցությունները և գրանցված մեկ դաշինքը հեռուստատեսությամբ և ռադիոյով տեղադրում են վճարովի գովազդներ:

[27] Զեկուցվող ժամանակահատվածում հեռարձակվել են չորս բանավեճեր Երկիր Մեդիայով և մեկը՝ Կենտրոն հեռուստաընկերությամբ: Սակայն, մեկ կամ ավել հրավիրված թեկանծուներ կամ կուսակցության ներկայացուցիչներ չեն ներկայացել Երկիր Մեդիայի կազմակերպած բանավեճին:

[28] Հռռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի 36.2 հոդվածի (փոփոխված 2010թ. հունիսի 10-ին) համաձայն ՀՌԱՀ-ն, իր իրավասություններն իրականացնելու համար, իրավասու մարմիններից, կազմակերպություններից և պաշտոնյաներից պահանջում և ստանում է տեղեկատվություն:

զեկույցը: ՀՌԱՀ-ն ինքը իրականացնում է ազգային և Երևանում գտնվող շրջանային հեռարձակողների ամբողջական դիտարկում է իրականացնում, մինչդեռ այն ստուգում է այլ հեռուստաընկերությունների և ռադիոկայանների ներկայացրած տվյալները պատահականության սկզբունքով, առանց զգուշացման, շաբաթը մեկ կամ երկու անգամ: Ապրիլի 17-ին ՀՌԱՀ-ն հրապարակել է 18 հեռուստատեսությունների և 12 ռադիոկայանների իր դիտակրկան առաջին զեկույցը: Զեկույցում չի նշվել Ընտրական օրենսգրքի որևէ խախտում, ընդ որում զեկուցվող ժամանակաշրջանում քաղաքական կուսակցություններից կամ թեկնածուներից ՀՌԱՀ-ն ոչ մի բողոք չի ստացել: Այնուհանդերձ, ՀՌԱՀ-ն պաշտոնական նամակներ է ուղարկել չորս հեռուստաընկերությունների՝ զգուշացնելով իր կողմից ոչ հավասար լուսաբանում համարվող դեպքերի մասին:[29]

Նախքան նախընտրական քարոզարշավի պաշտոնական մեկնարկը՝ Նախագահը և կառավարության պաշտոնյաները զգալիորեն լուսաբանվել են ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի կողմից դիտարկված լրատավամիջոցներով:[30] Ապրիլի 8-ից հետո այդ երևույթը զգալիորեն նվազել է: Դրանից հետո, լրատվամիջոցները հիմնականում կենտրոնացել են վեց խոշոր կուսակցությունների և դաշինքի վրա, մինչդեռ մնացած երեք քաղաքական կուսակցություններին հատկացվել է միայն 8 տոկոս լրատվական լուսաբանում:[31] Մեծամասնական թեկնածուները ստացել են սահմանափակ լուսաբանում:

Հանրային հեռարձակողները, Հանրային հեռուստատեսությունը և ռադիոն կատարում են իրենց պարտականությունները՝ անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելով համամասնական ընտրակարգով գրանցված կուսակցություններին և դաշինքին: Հ1 հանրային հեռուստաընկերությունը իր նորություններում 21 տոկոս լուսաբանել է ՀՀԿ-ին, ներառյալ, քարոզչական միջոցառումները որոնցում Նախագահ Սարգսյանը մասնակցել է որպես կուսակցության նախագահ, 22 տոկոս՝ ՀԱԿ-ին, 11 տոկոս՝ Ժառանգությանը (ներառյալ Ժառանգության թեկնածուների ցուցակում Ազատ Դեմոկրատներին), 13 տոկոս՝ ՕԵԿ-ին, 9 տոկոս ՀՅԴ-ին և 7 տոկոս՝ ԲՀԿ-ին: Հանրային ռադիոն նույն չափով է լուսաբանել համամասնական ընտրակարգով գրանցվածներին: Հեռարձակող մասնավոր լրատվամիջոցներում յուրաքանչյուր կուսակցությանը և դաշինքներին հատկացված լուսաբանման ծավալը տարբեր է եղել, տարբեր

[29] Նամակներն ուղարկվել են Հ1, Հ2, Կենտրոն ՀԸ և Երկիր Մեդիա: ՀՌԱՀ-ն տեղեկացրել է ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին, որ թեպետ հանձնաժողովը գրանցել է որոշակի խտրականություն, սակայն այն չի գրանցել Հստակ խախտումներ, քանի որ միայն քարոզարշավի ավարտից հետո կարող է որոշել, արդյոք հեռարձակողների լուսաբանումը հավասար է եղել, թե՝ ոչ:

[30] Օրինակ 49 տոկոս հանրային Հ1-ով և 51 տոկոս մասնավոր Շանթ ՀԸ-ով:

[31] Դիտարկված ութ հեռուստատեսային և ռադիո ալիքներով Հայաստանի դեմոկրատական կուսակցության, Հայաստանի կոմունիստական կուսակցության և ՄՀԿ-ի ընդհանուր լուսաբանումը հետևյալ կերպ է արտահայտվել՝ Հ1 (12 տոկոս), Հ2 (11 տոկոս), Արմենիա ՀԸ (9 տոկոս), Կենտրոն ՀԸ (5 տոկոս), Շանթ ՀԸ (4 տոկոս), Երկրի Մեդիա (10 տոկոս), Հանրային ռադիո (17 տոկոս), Ազատ Եվրոպա, Ազատություն ռադիներ (0 տոկոս):

հեռարձակողներ լուսաբանման ամենամեծ ծավալը հատկացրել են տարբեր կուսակցությունների:[32]

ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ն գրանցել է մի քանի դեպքեր, երբ հեռուստաալիքները, իրենց սեփական նյութերի վրա հիմնվելու փոխարեն, իրենց նորությունների հեռարձակման ընթացքում օգտագործել են նախապես տեսագրված քարոզչական նյութեր, որոնք քաղաքական կուսակցությունների կողմից նաև օգտագործվել են վճարովի գովազդում:[33]

V. ԴԻՄՈՒՄՆԵՐ ԵՎ ԲՈՂՈՔՆԵՐ

Տարբեր քաղաքական կուսակցություններ, թեկնածուներ և քաղաքացիական հասարակության խմբեր ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին իրենց անվստահությունն են արտահայտել ընտրությունների կազմակերպման, դատարանների և իրավապահ մարմինների կաղմից ընտրություններին վերաբերող բողոքների անաչառ և արդյունավետ ձևով լուծման վերաբերյալ: Թեպետ, շահագրգիռ մարմինները հրապարակել են բազմաթից բողոքներ, քիչ թվով բողոքներ են պաշտոնապես ներկայացվել համապատասխան իրավասու մարմիններին:

Ապրիլի 20-ի դրությամբ ԿԸՀ-ն ստացել է ավելի քան 80 բողոք, որոնց զգալի մեծ մասը ներկայացվել է միևնույն անձի կողմից՝ հիմնականում մատնանշվելով բարձրաստիճան պաշտոնյա թեկանծուների կողմից իրականացվող քարոզչության և ոչ հավասար լուսաբանման վերաբերյալ:ԿԸՀ-ն շարունակում է մերժել այս անձի կողմից ներկայացվող բողոքները, այն հիմքով, որ Ընտրական օրենսգիրքը անհատ քաղաքացիներին նման բողոքներ ներկայացնելու իրավունք չի տալիս:[34] Այնուամենայնիվ, ԿՀԸ-ն քննել է այս բողոքներից որոշների էությունը և Ընտրական օրենսգրքի խախտումներ չի հայտնաբերել: Քիչ թվով բողոքներ են ներկայացվել ԸԸՀ-ներ, մի դեպքում բողոք ներկայացնողը, սխալմամբ բողոքել է, որ քարոզչությունը, նախքան քարոզարշավի պաշտոնական շրջանի մեկնարկելը, օրենքով սահմանափակված է:[35] Մեկ այլ դեպքում, թիվ 23 ԸԸՀ-ն զգուշացում է ներկայացրել,

[32] Հ2 կմասնավոր հեռուստաընկերությունը իր նորությունների լուսաբանման ամենամեծ ծավալը հատկացրել է ՀՀԿ-ին (20 տոկոս) և ԲՀԿ-ին (20 տոկոս), Արմենիա ՀԸ՝ Ժառանգությանը՝ (25 տոկոս), ՀՀԿ-ին (21 տոկոս) և ՀԱԿ-ին (19 տոկոս), Կենտրոն ՀԸ՝ ԲՀԿ-ին (49 տոկոս), Շանթ ՀԸ ՝ Ժառանգությանը՝ (22 տոկոս), ՀՀԿ-ին (21 տոկոս), ՀԱԿ-ին (17 տոկոս) և ԲՀԿ-ին (15 տոկոս), և Երկիր Մեդիա՝ ՀՅԴ-ին (29 տոկոս): Ազատ Եվրոպա/Ազատություն ռադիոկայանը լուսաբանել է բոլոր խոշոր կուսակցություններին, գերակշռողը՝ ՀՀԿ-ին (27 տոկոս):

[33] ԲՀԿ-ի նույն քարոզչական նյութը հեռարձակվել է ապրիլի 8-ին Կենտրոն ՀԸ-ի և ապրիլի 9-ին ՇանթՀԸ-ի կողմից, ԿենտրոնՀԸ-ի և Երկիր Մեդիաի կողմից՝ ապրիլի 13-ին և ԿենտրոնՀԸ-ի և ՇանթՀԸ-ի կողմից՝ ապրիլի 14-ին և 19-ին, Կենտրոն ՀԸ-ի կողմից՝ ապրիլի 20-ին: Ապրիլի 19-ին Հ2-ը և Արմենիա ՀԸ-ին հեռարձակել են նույն լուրը ՀՀԿ մեծամասնական թեկնածուի քարոզչական միջոցառման վերաբերյալ: Այնուհանդերձ, այս նյութը դեռևս չի հեռարձակվել որպես վճարովի գովազդ, ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի Կողմից դիտակրկվող հեռարձակողներով:

[34] Դիմողը մի քանի բողոքներ և հայցադիմումներ է ներկայացրել նաև Վարչական դատարան և Վարչական վերաքննիչ դատարան. տարբեր պատճառներով բոլորի քննությունը մերժվել է:

[35] Ընտական Օրենսգրքի 18.1 հոդվածը սահմանում է, որ նախքան պաշտոնական քարոզարշավի մեկնարկը քարոզչությունը արգելված չէ: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ի հետ զրուցած կուսակցությունները և

մեծամասնական ընտրակարգով առաջադրված թեկնածուին՝ եռօրյա ժամկետում քարոզչական պաստառների վերաբերյալ կանոնների խախտումը վերացնելու համար:[36]

Թեկնածուների գրանցման վերաբերյալ չորս գործեր ներկայացվել են Վարչական դատարան:[37] Թեկնածուն, ում գրանցումը մերժել են և մեծամասնական, և համամասնական ընտրակարգով, բողոքել է, որ ԱՎՎ-ն անհիմն մերժել է իրեն հինգ տարվա մշտական բնակության վկայագիր տալ, և արդյունքում թե ԸԸՀ-ն, թե ԿԸՀ-ն ոչ իրավաչափ կերպով մերժել են իր գրանցումը:[38] Երկու մեծամասնական ընտրակարգով թեկնածուներ (թիվ 19 և 37 ընտրատարածքներում) բողոքել են, որ իրենց հակառակորդները անօրինական կերպով են գրանցվել՝ չհամապատասխանելով հինգ տարվա մշտական բնակության պահանջին: Դատարանը մերժել է բոլոր չորս գործերը ձևական հիմքերով՝ առանց բուն խնդրի ուսումնասիրության, թե արդյոք մշտական բնակության պահանջը իրավականորեն բավարարված է եղել:[39] Համաձայն օրենքի, այս որոշումները չէին կարող բողոքարկվել:

Ոստիկանությունը ուսումնասիրել է լրատվամիջոցներով հայտնած ընտրակաշառքների մի քանի դեպքեր, բայց ապացույցներ չի հայտնաբերել, հետևաբար կարճել է գործերը: Քաղաքացիական հասարակության խմբերը հավաստում են, որ քաղաքացիները երկմտում են հայտնել ընտրակաշառքների դեպքերի մասին՝ վախենալով կաշառք վերցնելու կամ կեղծ բողոքներ ներկայացնելու համար հետապնդումից:

թեկնածուները, թվում էր թե, հիմնականում անտեղյակ են եղել այս դրույթի մասին:

36 Դիմողն ավելի ուշ հաջորդիվ բողոք է ներկայացրել, պահանջելով թեկնածուին հանել գրանցումից, քանի որ նա չի ենթարկվել զգուշացումներին: Ապրիլի 24-ին ԸԸՀ-ն ընդունել է որոշում, որ նախազգուշացումը կատարվել է:

37 Վարչական դատարան ներկայացված ուշագրավ վերջին բողոքներից է, այն գործը, որում նշվում էր թիվ 35 ԸԸՀ-ում անդամների քաղաքական խտրական մոտեցմամբ նշանակման մասին (մերժվել է այն հիմքով, որ ԿԸՀ-ն լիազորված չէ ուսումնասիրել իր կողմից նշանակված ԸԸՀ-ի անդամների մասնագիտական կարողությունները) և գործը, որը բողոքարկում էր ԿԸՀ որոշումը, որում պարզաբանվում էր, որ ստորագրված ընտրողների ցուցակները հասարակության համար բաց չեն լինելու ընտրության օրվանից հետո (քննությունը մերժվել է՝ օրենքի պարզաբանումը դատական վերանայման ենթակա իրավական ակտ չլինելու պատճառաբանությամբ): Ավելի վաղ, մի ՀԿ-ի կողմից ներկայացված՝ ընտրաթերթիկում «բոլորին դեմ» տարբերակը ներառելու հայցադիմումի քննությունը մերժվել է՝ հիմք ընդունելով նման իրավասություն չունենալը:

38 Հայցվորին սկզբում տրամադրել են հինգ տարվա մշտական բնակության վկայագիրը, բայց հետագայում այն հետ է կանչվել՝ հայցորդի երկրից երկար բացակայության մասին լրատվամիջոցով կատարված հայտարարության հիման վրա կատարված հետաքննության արդյունքուն, որը պարզել է, որ հայցվորը տաս ամիս բացակայել է:

39 Դատարանը պնդել է, որ այն իրավասություն չունի քննելու բողոքների բուն էությունը, քանի որ հայցվորները իրենց բողոքը ներկայացրել էլ ԱՎՎ-ի հավաստագրի տրման/հետ կանչման և ԸԸՀ-ԿԸՀ որոշումների, այլ ոչ թե ԱՎՎ-ի հավաստագիր տալուն և հետ կանչելուն ուղղված գործողությունների դեմ: Երբ մի հայցվոր, հաջորդիվ, հայց է ներկայացրել ԱՎՎ գործողությունների դեմ, դատարանը մերժել է հայցի քննությունը՝ ընտրական իրավունքների պաշտպանության համար հայց ներկայացնելու եռօրյա ժամկետը խախտելու պատճառաբանությամբ:

VI. ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-Ի ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Զեկուցվող ժամանակաշրջանում ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ԸԴԱ-ին շարունակել է իր կանոնավոր գործունեությունը, հանդիպել է պաշտոնական անձանց, կուսակցությունների ներկայացուցիչների, թեկնածուների, ընտրությունների կազմակերպիչների, դատական պաշտոնյաների, լրատվական և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների, ինչպես նաև միջազգային հասարակության հետ: Ամբողջ երկրով տեղակայված երկարաժամկետ դիտորդները շարունակում են հետևել շրջաններում ընտրությունների նախապատրաստմանը և քարոզարշավին, և պատրաստվում են տեղակայել կարճաժամկետ դիտորդներին: Դիվանագիտական ներկայացուցիչների և Հայաստանի Հանրապետությունում գրանցված միջազգային կազմակերպությունների համար ապրիլի 5-ին կազմակերպվել է ճեպազրույց:

Սույն զեկույցի անգլերեն տարբերակը հանդիսանում է միակ պաշտոնական փաստաթուղթը

Առկա է հայերեն ոչ պաշտոնական թարգմանությունը